ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Լիլիթ Յուրիի Հովականյան

# ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

**Ը.00.03 - <<Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում>>**
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

## ՍԵՂՄԱԳԻՐ

**ԵՐԵՎԱՆ 2015**

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Բորիսի Սալնազարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
Արմեն Աշոտի Հակոբյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Արշալույս Սեմիկի Մարգարյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2015 թվականի հոկտեմբերի 29-ին, ժամը $15^{30}$-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. սեպտեմբերի 29-ին:

014 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ս. Ա. Գևորգյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Վերջին երկու հարյուր տարիների ընթացքում Եվրասիայում և Ամերիկայում տեղի են ունեցել տարբեր ընդգրկումների և ծավալների ավելի քան քսան տնտեսական ճգնաժամեր, որոնք էապես ազդել են հասարակության զարգացման բոլոր ոլորտների վրա: Երկրների միջև տեղեկատվական, տնտեսական, քաղաքական կապվածության արդյունքում ճգնաժամերը ձեռք են բերել գլոբալ բնույթ և դադարել են այս կամ այն երկրի կամ, նույնիսկ, երկրների խմբի խնդիրը լինելուց: Եվ եթե նախկինում ֆինանսատնտեսական ճգնաժամերը մտահոգիչ էին աղքատ կամ ցածր եկամուտներով երկրների համար, ապա այժմ այն լրջորեն անհանգստացնում է նաև զարգացած երկրներին: Ճգնաժամային ռիսկերի ներքո էլ ավելի է կարևորվում պետական պարտքի խնդիրը, որը կարող է հիմք հանդիսանալ ինչպես տնտեսության զարգացման և կայունության, այնպես էլ իրավիճակի սրման և նոր հիմնախնդիրների առաջացման համար: Այս հանգամանքից ելնելով առանձին հեղինակներ այն տեսակետն են զարգացնում, որ պետական պարտքը միանգամայն բացասական հետևանքներ է ունենում երկրի տնտեսության վրա, հետևաբար անհրաժեշտ է հրաժարվել դրանից: Մինչդեռ պետական պարտքը կարող է մեծապես ազդել տնտեսության հետագա առաջընթացի, ներդրումների և նոր տեխնոլոգիաների ներգրավման, սոցիալական հիմնախնդիրների լուծման, հնարավոր սոցիալական լարվածության թուլացման, ենթակառուցվածքների զարգացման և այլ հարցերում: Սակայն, հատկապես պարտքային վերջին ճգնաժամերից հետո, արտաքին վարկերի ներգրավման, պարտքի կուտակման և սպասարկման խնդիրները հանրության կողմից ավելի շուտ ընկալվում են որպես ծայրաստիճան բացասական երևույթներ, ինչը կապված է ոչ միայն առկա սոցիալ-տնտեսական խնդիրների հետ, այլ նաև այն հանգամանքով, որ շատ հաճախ պետական վերահսկողական մարմինների կողմից բարձրաձայնվում է այդ միջոցների անարդյունավետ և ոչ նպատակային իրացումների մասին: Այս առումով, ֆինանսական կախվածության և տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, թերևս, ամենանվազագույն տեսանելի ռիսկերն են, որոնք հետզհետե խորանալով կարող են մեր երկրին կանգնեցնել անլուծելի նոր խնդիրների առջև:

Ատենախոսության շրջանակներում ատենախոսն իրականացրել է ՀՀ արտաքին պարտքի սպասարկման, արտաքին փոխառությունների և վարկային ծրագրերի սոցիալական ուղղվածության, բյուջեի սոցիալական ծախսերի հետ վերջիններիս փոխհարաբերության (ներդաշնակության կամ աններդաշնակության), արտաքին պարտքի սպասարկման սոցիալական բեռի, այդ բեռի հնարավոր մեղմացման, ներգրավված պարտքային միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման և այլ հիմնախնդիրների լուսաբանում:

ՀՀ սոցիալ-տնտեսական ներկա իրավիճակում թվարկված հիմնախնդիրների արդիականությունը պայմանավորել է թեմայի, հետազոտության նպատակի ընտրությունը և խնդիրների առաջադրումը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության նպատակն է համաշխարհային տնտեսության պարտքային

հիմնախնդիրների և գլոբալ անհաշվեկշռվածության համատեքստում հետազոտել ՀՀ արտաքին պետական պարտքի ցուցանիշները և կառուցվածքը, գնահատել ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկման ազդեցությունը տնտեսության սոցիալական ոլորտի վրա: Այդ նպատակի իրագործման համար դրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- հետազոտել պետական պարտքի ընդլայնման միտումները համաշխարհային տնտեսությունում, ինչպես նաև արտաքին պետական պարտքի գնահատման արդի համակարգը,
- ուսումնասիրել և վերլուծել ՀՀ պետական պարտքի կառուցվածքն ու ցուցանիշները,
- կատարել ՀՀ պետական բյուջեի սոցիալական ուղղվածության և ՀՀ արտաքին պետական վարկերի սոցիալական ծրագրերի համադրական վերլուծություն,
- ՀՀ-ում սոցիալական զարգացման և արտաքին պետական պարտքի ցուցանիշների համեմատական վերլուծության միջոցով բացահայտել արտաքին պետական պարտքի սոցիալական ազդեցության մակարդակը,
- գնահատել պետական բյուջեի վրա արտաքին պարտքի սպասարկման բեռը,
- բացահայտել բյուջեի պարտքային բեռի փոփոխություններին հասարակության սոցիալական բնութագրիչների արձագանքը,
- գնահատել արտաքին պետական պարտքի սպասարկում/ բյուջեի սոցիալական ծախսեր հարաբերակցության վրա դրամի փոխարժեքի, արտաքին փոխառությունների ներգրավման տոկոսադրույքի, ինչպես նաև ՀՀ միջազգային պահուստների փոփոխության ազդեցությունը:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը ՀՀ պետական բյուջեն է, արտաքին պարտքը սպասարկող և սոցիալական ուղղվածություն ապահովող պետական մարմինները և ոչ պետական ու միջազգային կազմակերպությունները, իսկ առարկան՝ համաշխարհային տնտեսության ֆինանսական համակարգի զարգացման համատեքստում Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքի կառավարման սոցիալական հիմնախնդիրներն են և դրանց լուծման ընթացքում ծագող հարաբերությունները:

**Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:** Ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել արտասահմանյան և հայ հեղինակների՝ պետական պարտքի վերաբերյալ գիտական աշխատանքներն ու հրապարակումները, պետական պարտքի վերլուծությամբ զբաղվող հեղինակավոր միջազգային կազմակերպությունների փորձագետների վերլուծությունները, ինչպես նաև պարտքի կառավարումը վերաբերող ազգային օրենսդրությունը: Հետազոտության ընթացքում կիրառվել են ուսումնասիրության տնտեսամաթեմատիկական, վիճակագրական խմբավորումների և մաթեմատիկական մոդելավորման մեթոդները:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տեղեկագրերն ու տեղեկատվությունը, ՀՀ

Վերահսկիչ պալատի հաշվետվությունները, միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի և այլ երկրների արտաքին պարտքին վերաբերող վիճակագրական նյութերը:

**Ատենախոսության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:** Ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ են հետևյալները.

- Բացահայտվել և գնահատվել է սոցիալական ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության ներգրավված փոխառությունների և պետական բյուջեից սոցիալական հատկացումների միջև կախվածությունը:
- Արտաքին պետական պարտքի սպասարկման և բնակչության սոցիալական բարեկեցության ցուցանիշների համեմատության և առաձգականության գնահատման հիման վրա բացահայտվել է արտաքին պետական պարտքի սպասարկման հավելաճի առաջանցիկ բնույթը:
- Գնահատվել է արտաքին պետական պարտքի սպասարկման բեռի լարվածության ազդեցությունն այնպիսի ցուցանիշների վրա, ինչպիսիք են բյուջեի սոցիալական հատկացումների մակարդակը, աղքատությունը և Ջինիի գործակիցը:
- Արտաքին պետական պարտքի սպասարկման սոցիալական բեռը գնահատող լրամշակված գործակցի միջոցով գնահատվել է այդ գործակցի և դրամի փոխարժեքի, արտաքին փոխառությունների ներգրավման տոկոսադրույքի, ինչպես նաև ՀՀ միջազգային պահուստների մեծության միջև եղած կապը:

**Աշխատանքի գործնական նշանակությունը**: Աշխատանքում ներկայացված լուծումները կարող են կիրառվել պետական պարտքի կառավարման աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներում:

Ատենախոսության տեսական և գործնական արդյունքները կարող են օգտակար լինել նաև պետական պարտքի վերլուծությամբ զբաղվող հետազոտողների համար:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:** Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ֆինանսներ» ամբիոնում: Հեղինակի կողմից հրապարակվել են գիտական 7 հոդված:

**Հետազոտության կառուցվածքը և ծավալը** Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը բաղկացած է 164 էջից՝ առանց հավելվածների: Այն պարունակում է 17 աղյուսակ և 20 գծապատկեր:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **«Ներածություն»** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակը, խնդիրները, տեսական, մեթոդական ու տեղեկատվական հիմքերը, հիմնական արդյունքները, գիտական նորույթը և գործնական նշանակությունը:

**Ատենախոսության առաջին՝ «Պետական պարտքի տնտեսական բովանդակությունը և գնահատման մեթոդաբանական հիմքերը»** գլխում, ներկայացված են պետական պարտքի տնտեսագիտական հիմքերն ու հիմնական բնութագրերը, վերջինիս դերը բնորոշող ժամանակակից հետազոտությունները, միտումները համաշխարհային տնտեսությունում, ինչպես նաև արտաքին պետական պարտքի գնահատման արդի համակարգերը:

Պետական պարտքի հիմնախնդիրը եղել և մնում է տնտեսագիտության ամենահիմնական առանցքներից մեկը, որին տարբեր տեսանկյուններից անդրադարձել են գրեթե բոլոր ժամանակների խոշոր տնտեսագետները: Պետական պարտքի շուրջ ծավալված բուռն քննարկումների հիմնական պատճառն ըստ ատենախոսի այն է, որ պետական պարտքի արդյունավետության գնահատումը դժվար, երբեմն գրեթե անհնար է լինում: Այլ է միկրոկարդակում ներգրավված փոխառու միջոցների արդյունավետության խնդիրը, ինչը ֆինանսական լծակի արդյունավետության գնահատմամբ կարելի է հասկանալ՝ դիտարկելով փոխառու միջոցների ներգրավման միջին տոկոսադրույքը և կազմակերպության շահութաբերության մակարդակը: Նույն կերպ, սակայն, հնարավոր չէ գնահատել պետական պարտքի արդյունավետությունը, քանի որ, պետության տեսանկյունից շահութաբերությունը ոչ միշտ է քանակապես շոշափելի, բացի դրանից, պետական պարտքի ներգրավման ժամանակահատվածը, ինչպես նաև վերջինիս ապահոված արդյունքները ժամանակի մեջ չեն համընկնում և կարող են ի հայտ գալ միայն շատ տարիներ անց:

Ատենախոսի դիտարկումների համաձայն համաշխարհային վերջին ճգնաժամը, որը վերածվեց յուրատեսակ պարտքային ճգնաժամի, իր բացասական ազդեցությունն ունեցավ ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների տնտեսությունների վրա: Դիտարկված բոլոր երկրներում Պարտք ՀՆԱ հարաբերակցությունը, հատկապես վերջին տարիներին,

գերազանցել է պարտքի կայունության տեսանկյունից անվտանգ համարվող 60%[1] շեմը (տե՛ս, Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

**Պետական պարտք ՀՆԱ հարաբերակցությունը մի շարք երկրներում, 2007-2014թթ., %-ով[2]**

| Երկրներ | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014[3] |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԱՄՆ | 75.7 | 91.8 | 104.9 | 115.3 | 120.9 | 123.7 | 122.0 | 104.8 |
| Միացյալ թագ. | 50.1 | 62.0 | 75.7 | 87.1 | 100.9 | 105.0 | 100.8 | 89.5 |
| Գերմանիա | 64.0 | 67.8 | 75.3 | 83.8 | 83.3 | 86.2 | 81.5 | 73.1 |
| Ֆրանսիա | 75.6 | 81.5 | 93.2 | 96.8 | 100.7 | 110.4 | 110.5 | 95.1 |
| Իտալիա | 110.6 | 112.9 | 125.9 | 124.8 | 117.8 | 136.0 | 143.0 | 132.1 |
| Իսպանիա | 41.7 | 47.1 | 61.7 | 66.4 | 77.0 | 90.8 | 102.0 | 97.7 |
| Հունաստան | 112.8 | 117.2 | 134.6 | 128.3 | 110.2 | 164.2 | 179.2 | 177.2 |
| Պորտուգալիա | 78.1 | 82.8 | 96.1 | 104.1 | 107.5 | 136.3 | 141.2 | 130.2 |
| Իռլանդիա | 27.5 | 47.6 | 68.3 | 85.2 | 111.0 | 131.3 | 136.7 | 109.5 |
| Ճապոնիա | 180.0 | 184.2 | 207.3 | 210.6 | 226.5 | 234.8 | 239,3 | 246.4 |

Պետական պարտքի բեռի գնահատման համընդհանուր ընդունելի ներկայիս համակարգն առաջ է քաշվել միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից, որը հնարավորություն է տալիս պետական պարտքի բեռի ու երկրի մակրոտնտեսական իրավիճակի միջև փոխադարձ ազդեցության վերաբերյալ ընդհանուր պատկերացում ստանալ: Առավել լայն տարածում գտած ցուցանիշերի (ՊՊ/ՀՆԱ, ԱՊՊ ԶՆԱ-ի/ՀՆԱ, ԱՊՊ/արտահանում և այլն) ազդեցությունը հաշվի առնելով, Համաշխարհային բանկի մասնագետներն առանձնացնում են պարտապան երկրի պարտքային կայունության 3 հիմնական գործոն՝ կուտակված արտաքին պետական պարտքի մեծությունը և մարման պայմանները, երկրի տնտեսական զարգացման ցուցանիշերը և նոր ֆինանսական միջոցների ներգրավման դինամիկան ու կառուցվածքը (արտոնյալ և սովորական փոխառությունների հարաբերակցությունը, ինչպես նաև դրամաշնորհները[4]):

Գործնականում կիրառվող պարտքային ցուցանիշերից և ոչ մեկը, ատենախոսի կարծիքով, ամբողջական չի ներկայացնում

[1] Այս ցուցանիշը նաև եվրոգոտում ներառվելու Մաաստրիխտյան պայմաններից մեկն է:

[2] 2007-2013թթ. տվյալների աղբյուրը http://www.oecd-ilibrary.org/economics/country-statistical-profiles-key-tables-from-oecd_20752288 կայքն է:

[3] 2014թ.-ի տվյալների, ինչպես նաև ՌԴ բոլոր տվյալների համար աղբյուր է հանդիսացել https://www.imf.org/external/pubs/ft/weo/2015/01/weodata/weoselco.aspx?g=2001&sg=All+countries կայքը:

[4] The Challenge of Maintaining Long-Term External Debt Sustainability. World Bank, IMF. April 20, 2001. http://www.imf.org/external/np/hipc/2001/lt/042001.pdf.

պարտապան երկրի պարտքային դիրքի բոլոր կողմերը, այնուհանդերձ, որքան մեծ են սահմանված ցուցանիշերից շեղումների մեծությունը, այնքան մեծ է պարտքային խնդիրների առաջացման հավանականությունը, և հակառակը, որքան մեծ է երկրի՝ սահմանային ցուցանիշներից ունեցած «անվտանգ գոտին», այնքան մեծ է երկրում հնարավոր խնդիրների՝ առանց լուրջ սոցիալ –տնտեսական ցնցումների լուծման հավանականությունը:

Աշխատանքի այս բաժնում թվարկված հարցերից զատ ատենախոսն անդրադարձել է պետական պարտքի, հատկապես արտաքին պետական պարտքի ռիսկերին, նշելով որ կախված կոնկրետ երկրին բնորոշ պայմաններից և իրավիճակներից, տարբեր երկրներ կենտրոնանում են ռիսկերի տարբեր տեսակների վրա:

**Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ արտաքին պետական պարտքի սոցիալական բաղադրիչի համադրական վերլուծությունը»** գլուխը նվիրված է ՀՀ պետական պարտքի կառուցվածքի և ցուցանիշների, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի ծախսերի և արտաքին պետական վարկային ծրագրերի բաշխման սոցիալական բովանդակության ուսումնասիրությանն ու վերլուծությանը:

ՀՀ-ում վերջին տասնհինգ տարիներին պետական պարտքն աճել է մոտ հինգ անգամ (1999թ.-ի 930.3մլն. ԱՄՆ դոլարի փոխարեն 2015թ.-ի առաջին կիսամյակի դրությամբ կազմել է 4,680.3 մլն. ԱՄՆ դոլար[5]): Ըստ ատենախոսի, այս համատեքստում, սակայն, անհանգստացնողը ոչ թե պարտքի ֆիզիկական ծավալների կտրուկ աճն է, այլ առկա տնտեսական զարգացումները, պարտքի ներգրավման հիմնավորվածության և արդյունավետության խնդիրները, ինչպես նաև պարտքի, հատկապես արտաքին պարտքի ներգրավման պայմանների փոփոխություններով պայմանավորված ռիսկերը:

Ատենախոսի կողմից վերլուծվել և գնահատվել է ՀՀ պետական պարտքի կայունության և անվտանգության հիմնախնդիրները՝ պարտքի կայունության գնահատման առավել տարածված ցուցանիշների միջոցով:

Հիմնվելով ուսումնասիրության արդյունքների վրա՝ ատենախոսը եզրահանգել է, որ չնայած ՀՀ պետական պարտքի կայունության գնահատման հիմնական ցուցանիշները 1999-2013թթ. ընթացքում գտնվել են միջազգային կառույցների կողմից նվազ պարտքի բեռ ունեցող երկրների համար սահմանված թույլատրելի շեմի տիրույթում, այնուամենայնիվ, որոշ ցուցանիշներ տարբեր տարիների հատել են այդ սահմանը:

Ատենախոսն անդրադառնալով պարտքի կայունության ռիսկերին նշել է, որ ՀՀ արտարժույթի շուկայում փոխարժեքների փոփոխության ամենաչնչին տատանումն անգամ նշանակալի ազդեցություն է ունենում պարտքի մեծության վրա: Հիմնվելով ՀՀ արտաքին պետական պարտքի իրական արժութային կառուցվածքի և 2014թ.-ի արտարժույթի փոխարժեքների վրա, ատենախոսը հաշվել

[5] ՀՀ պետական պարտքի ամսական տեղեկագիր, հուլիս 2015, www.mfe.am

է, որ արտարժույթի փոխարժեքների փոփոխության ազդեցությունը ՀՀ կառավարության պարտքի ծավալի վրա 2014թ.-ին կազմել է 157.9 մլրդ. դրամ (տե՛ս, Աղյուսակ 2), որը մոտ 2,5 անգամ գերազանցում է ծրագրված պարտքի գծով տոկոսավճարների գումարը (63.4մլրդ. դրամ[6]) և ավելի քան 47%-ով՝ 2014թ.-ին արտաքին աղբյուրներից ներգրավված վարկերի և փոխառությունների ընդհանուր գումարը (106.75մլրդ. դրամ[7]):

Աղյուսակ 2

**ՀՀ արտարժույթի շուկայում փոխարժեքների փոփոխության ազդեցությունը ՀՀ կառավարության 2014թ.-ի արտարժութային պարտքի վրա[8]**

| | Առ 01.01.2014 արտարժույթի փոխարժեքը, դրամ | Առ 01.31.2014 արտարժույթի փոխարժեքը, դրամ | ՀՀ ԱՊՊ-ն տարեսկզբի փոխարժեքով, մլրդ. դրամ | ՀՀ ԱՊՊ-ն տարեվերջի փոխարժեքով, մլրդ.դրամ |
|---|---|---|---|---|
| ԱՄՆ դոլար | 405.64 | 474.97 | 768.4 | 899.7 |
| Անգլիական ֆունտ | 668.4 | 737.68 | 79.6 | 87.8 |
| Եվրո | 559.54 | 577.47 | 414.3 | 427.6 |
| Ճապոնական իեն | 38.70 | 39.69 | 188.0 | 192.8 |
| ԱՄԷ դիրհամ | 110.45 | 129.31 | 1.6 | 1.9 |

Երկրի զարգացման սոցիալական ուղղվածության հիմնախնդիրը, որպես առաջնահերթություն, առկա է գրեթե բոլոր կառավարությունների նպատակներում, այլ հարց է, թե որքանով է նրանց հաջողվում արդյունավետորեն լուծել նշված խնդիրը: Այս նպատակով երկրների կառավարությունները հենվում են կամ սեփական միջոցների և հնարավորությունների վրա, կամ աջակցություն ստանում արտաքին աղբյուրներից, ինչը ևս մեկ անգամ նշում է այս խնդրի կարևորության մասին:

Սոցիալական ուղղվածություն ունեցող արտաքին փոխառությունների և հասարակության սոցիալական բարեկեցության վրա դրանց հնարավոր ազդեցության բացահայտման նպատակով աշխատանքի այս բաժնում ատենախոսը փորձել է ընդգրկել նաև արտաքին վարկային այնպիսի ծրագրերը, որոնք իրենց բնույթով, ամենաառանցքային ու հիմնարար դրույթներով սոցիալական են, պետք է նպաստեն մարդկանց կյանքի ու գործունեության պայմանների բարելավմանը, ինչպես նաև

[6] ՀՀ 2015-2017թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիր, էջ 66:
[7] ՀՀ պետական պարտքի ամսական տեղեկագիր, դեկտեմբեր 2014, էջ 2:
[8] 2014թ.-ի արտարժույթի փոխարժեքները տարեսկզբի և տարեվերջի դրությամբ վերցված են ՀՀ ԿԲ-ի պաշտոնական կայքից՝ https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx

համապատասխան նախադրյալներ ստեղծեն սոցիալական բնույթի տարբեր խնդիրների հաղթահարման համար: Վերոնշյալ վարկային ծրագրերի համադրումը բյուջետային ծախսերի հետ ատենախոսի կողմից դիտարկվել է թե՛ պարտավորությունների արդյունքում ձևավորված պարտքի մնացորդային ծավալների և թե՛ տարեկան ստացումների դիտանկյունից:

Տրամաբանական է, որ կառավարության սոցիալական նպատակներով տրամադրած փոխառությունները և վարկերը պետք է իրենց դրական ազդեցությունն ունենան սոցիալական ոլորտին տրամադրված բյուջետային հատկացումների վրա (տե՛ս, Գծապատկեր 1):




**Գծապատկեր 1: ՀՀ ՊԲ սոցիալական ծախսերի կախվածությունը կառավարության սոցիալական նպատակներով վարկերի տարեկան ստացումներից, 1999-2013 թթ., %**[9]

Ստացվում է, որ 1999-2013թթ. ընթացքում ՊԲ-ից սոցիալական նպատակներով հատկացված միջոցների միջինը մոտ 5%-ի չափով սոցիալական ոլորտին ուղղված ծրագրերի շրջանակներում փոխառություններ են ստացվել արտաքին միջոցներից, և եթե հաշվի չառնենք արտաքին դրամաշնորհներ ենթադրող սոցիալական ծրագրերը, ապա կարելի է ասել, որ սոցիալական ոլորտին ուղղված միջոցառումների գերակշիռ մասը ֆինանսավորվում է ՀՀ ՊԲ ներքին աղբյուրների հաշվին:

Դիտարկվող ցուցանիշների միջև առկա կապի ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքիր է նաև վերջիններիս հավելաճի տեմպերի հիման վրա հաշվարկված հավելաճի ճկունության գործակիցը, որը բնութագրում է, թե կառավարության արտաքին պարտավորություններում սոցիալական ոլորտին ուղղված ծրագրերի 1%-աճն ինչպես է անդրադառնում ՀՀ պետական բյուջեի սոցիալական ծախսերի վրա (տե՛ս, Աղյուսակ 3):

[9] Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ ՖՆ 1999-2013թթ. տվյալները:

Աղյուսակ 3

**ՀՀ կառավարության սոցիալական ծրագրերի շրջանակներում տարեկան ստացված վարկերի և ՀՀ ՊԲ սոցիալական ծախսերի տարեկան հավելաճերի 2000-2013թթ. միջին ճկունության գործակիցը[10]**

| | 2000-2013թթ |
|---|---|
| ՀՀ կառավարության սոցիալական ուղղվածության ծրագրերի շրջանակներում տարեկան ստացված վարկերի հավելաճը, % | 42.6 |
| ՀՀ ՊԲ սոցիալական ծախսերի տարեկան հավելաճը, % | 20.4 |
| Հավելաճի ճկունության գործակից | 0.47 |

Արդյունքները վկայում են, որ 2000-2013թթ. ընթացքում միջինացված առաձգականության կամ ճկունության ցուցանիշը կազմել է 0.47, այսինքն, կառավարության արտաքին պարտավորություններում սոցիալական ուղղված փոխառությունների 1% ավելացումն ուղեկցվել է բյուջեի սոցիալական ծախսերի 0.47% ավելացմամբ: Առաձգականության նման ցածր գործակիցը վկայում է ՀՀ ՊԲ-ի սոցիալական ծախսերի աճի նվազ հակվածության մասին:

**Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ արտաքին աղբյուրներից ներգրավված միջոցների սոցիալական ուղղվածության մակարդակի գնահատումը»** գլխում ատենախոսը վերլուծել և գնահատել է 2002-2013թթ. ընթացքում արտաքին պարտավորությունների սպասարկման հասարակության ներուժը: Վերջինիս նպատակով դիտարկվել է արտաքին պետական պարտքի սպասարկման և հասարակության սոցիալական զարգացումները բնութագրող ցուցանիշների միջին հավելաճի տեմպերը և դրանց հիման վրա հաշվարկված հավելաճի առաձգականության գործակիցները (տե՛ս Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

**Արտաքին պարտքի սպասարկման 2002-2013թթ. միջին հավելաճի առաձգականության գործակիցները[11]**

| | |
|---|---|
| Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամտի հավելաճի տեմպ | 0.3 |
| Գործազրկության հավելաճի տեմպ | -0.1 |
| Ծնելիության հավելաճի տեմպը | 0.1 |
| Միջին ամսական անվանական աշխատավարձի հավելաճի տեմպը | 0.4 |

[10] Աղյուսակում բերված գործակիցները հաշվարկված են հեղինակի կողմից:

[11] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից կատարված հաշվարկների հիման վրա:

| | |
|---|---|
| Միջին ամսական կենսաթոշակի հավելաճի տեմպը | 0.4 |
| Մանրածախ առևտրի հավելաճի տեմպը | 0.2 |

Հաշվարկների արդյունքում պարզվել է, որ արտաքին պարտքի սպասարկման 1% աճին համապատասխան դիտարկվող ժամանակահատվածում տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամուտն աճել է ընդամենը 0,3%-ով, միջին ամսական աշխատավարձը և կենսաթոշակը՝ 0,4%-ով: Պատկերն ավելի քան մտահոգիչ է, եթե այս բոլոր ցուցանիշները դիտարկվում են սոցիալական խնդիրների մեկ ամբողջական համակարգի ներքո:

Ստացվում է, որ ոչ միայն բնակչության եկամուտներն են աճում ավելի դանդաղ, քան արտաքին պետական պարտքի սպասարկման ծավալները, այլ նաև վերջինս 10 անգամ գերազանցում է ծնելիության հավելաճի տեմպին: Հետևաբար, հասարակական ներուժի վերարտադրողականության ներկայիս մակարդակը բավարար չէ ապագայում հասարակության համար առանց ցնցումների արտաքին պարտավորությունների սպասարկման համար:

Արտաքին պետական պարտքի և բյուջեի ծախսերի միջև կապերի հետազոտման նպատակով ատենախոսը ներմուծել է արտաքին պարտքի բեռը բնութագրող ԱՊԲ ցուցանիշ, որը ներկայացված է հետևյալ բանաձևի միջոցով[12]՝

$$ԱՊԲ_t = \frac{Տ_t + Մ_t}{ՊԲԾ_t} = \frac{ՊՄ_t}{ՊԲԾ_t} \qquad (1)$$

ԱՊԲt -ն արտաքին պարտքի բեռն է t –րդ տարում, որը կարող է հանդես գալ գործակցով կամ տոկոսային արտահայտությամբ, ՊԲԾt-ն $t$ –րդ տարվա պետական բյուջեի ծախսերի մեծությունն է, $t$ –ն ժամանակի ինդեքսն է, $Տ_t$ – տոկոսավճարներն են, որոնք իրականացվել են t –րդ տարում, $Մ_t$ – արտաքին պարտքի մայր գումարի մարումն է t –րդ տարում, $ՊՄ_t$ – պարտքի սպասարկման ցուցանիշն է t –րդ տարում:

Արտաքին պարտքի բեռի (ԱՊԲ) ցուցանիշը ցույց է տալիս, թե պետական բյուջեի ընդհանուր ծախսերի որ մասն է ուղղվում արտաքին պետական պարտքի սպասարկմանը[13]:

Արտաքին պետական պարտքի բեռի միջին ցուցանիշն ուսումնասիրված՝ 1999-2013թթ. ժամանակահատվածում կազմել է մոտ 0.11 կամ 11 %: Պարտքի բեռի ամենածանր ցուցանիշը գրանցվել է 2013թ.-ին՝ 0.34 կամ 34,3%:

---

[12] Ցուցանիշը բերվել է բանաձևային տեսքի հեղինակի կողմից՝ հիմքում ունենալով ՌԴ Բյուջետային օրենսգրքի 14-րդ գլխի 111-րդ հոդվածը:

[13] Որքան ցուցանիշը մոտ է մեկին, այնքան ավելի մեծ է բյուջեի պարտքային բեռը:

Արտաքին պարտքի բեռի սոցիալական նշանակության բացահայտման նպատակով ատենախոսը կոռելյացիոն վերլուծության միջոցով դիտարկել է վերջինիս կապն այնպիսի ցուցանիշների հետ, ինչպիսիք են աղքատության և գործազրկության մակարդակները, բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն, Ջինի գործակիցը, և սոցիալական ծախսեր բյուջեի ծախսեր հարաբերակցությունը: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ արտաքին պարտքի բեռի ավելացումը մեծացրել է սոցիալական լարվածության մակարդակը: Ըստ ատենախոսի պետական բյուջեն ծանրաբեռնելով արտաքին պարտավորությունների սպասարկման խնդիրներով, պետությունն առավել նվազ հատկացումներ է կատարում երկրում սոցիալական լարվածության մեղմման նպատակով:

Այնուհետ փորձելով արհեստական սոցիալական բաղադրիչ մտցնել ԱՊԲ ցուցանիշի մեջ, ատենախոսն առաջարկում է հաշվարկել մեկ այլ՝ արտաքին պարտքի սոցիալական բեռի՝ ԱՊՍԲ գործակիցը, որի տարբերությունը ԱՊԲ-ից կայանում է նրանում, որ վերջինս ցույց է տալիս թե պետական բյուջեի սոցիալական ծախսերի (այլ ոչ թե ընդհանուր ծախսերի) որքան մասն է ուղղվում պետական պարտքի սպասարկմանը: Հետևաբար որքան այս ցուցանիշն աճի, այնքան կբարձրանա արտաքին պարտքի սոցիալական բեռը, քանզի արդեն կարիք կլինի շատ ավելի մեծ գումարներ ուղղել պարտքի սպասարկմանը՝ կրճատելով տվյալ և հաջորդ ժամանակի սոցիալական ուղղվածության ծախսերը:

Արտաքին պետական պարտքի սոցիալական բեռը բնութագրող ցուցանիշը ներկայացված է հետևյալ բանաձևի օգնությամբ[14].

$$\text{ԱՊՍԲ}_t = \frac{\text{Տ}_t + \text{Ս}_t}{\text{ՊԲՍԾ}_t} = \frac{\text{ՊՍ}_t}{\text{ՊԲՍԾ}_t} \quad (2)$$

$\text{ԱՊՍԲ}_t$ –ն արտաքին պարտքի սոցիալական բեռն է t –րդ տարում, $\text{ՊԲՍԾ}_t$ –ն $t$ –րդ տարվա պետական բյուջեի սոցիալական ծախսերի մեծությունն է, $t$ –ն ժամանակի ինդեքսն է, $\text{Տ}_t$ –ն տոկոսավճարներն են, որոնք իրականացվել են t –րդ տարում, $\text{Ս}_t$ – ն արտաքին պարտքի մայր գումարի մարումն է t –րդ տարում, $\text{ՊՍ}_t$ – ն պարտքի սպասարկման ցուցանիշն է t –րդ տարում:

Չնայած ԱՊՍԲ-ի մեծության վրա կարող են ազդել բազմաթիվ տնտեսական գործոններ, սակայն սույն աշխատանքի շրջանակներում ատենախոսն առանձնացրել է ՀՀ միջազգային պահուստների, արտաքին վարկերի միջին տոկոսադրույքի և փոխարժեքի ցուցանիշները: Նշված գործոնների ընտրությունը հիմնավորելու համար, ատենախոսը կատարել է կոռելյացիոն վերլուծություն, որի արդյունքները թույլ են տալիս ենթադրելու, որ ցուցանիշների ընտրությունը ճիշտ է կատարվել:

---

[14] Բանաձևը լրամշակված է հեղինակի կողմից՝ հիմք ունենալով ՌԴ բյուջետային օրենսգրքի 111-րդ հոդվածում բերված ցուցանիշը:

Կատարված կոռելյացիոն վերլուծության արդյունքում, սակայն, պարզվել է, որ նշված բոլոր փոփոխականները միաժամանակ վերցնելու պարագայում հնարավոր է առաջանա մուլտիկոլինեարություն (*multicollinearity*)[15]: Դրանից խուսափելու համար հեղինակը դիմել է անուղղակի ձևով գործոնների դիտարկման փորձին, այնուհետև որոշ թվաքանակային գործոնությունների արդյունքում ստացվել են հետևյալ էկոնոմետրիկ մոդելները.

$$\widehat{ln\Phi_t} = 6.48 + 0.11 ln\text{ԱՎՄՏ}_t - 0.23\, ln\text{ԱՎՄՏ}_{t-6}, \text{ (3)}$$

$\widehat{ln\Phi_t}$ – ն լոգարիթմված վիճակում փոխարժեքի մեծությունն է t – րդ տարում, $ln\text{ԱՎՄՏ}_t, ln\text{ԱՎՄՏ}_{t-6}$ –ն համապատասխանաբար t–րդ և t-6–րդ տարում արտաքին վարկերի միջին տոկոսադրույքներն են լոգարիթմված վիճակում:

$$ln\widehat{\text{ԱՊՄԲ}}_t = 3.06 + 3.42 ln\hat{\Phi}_t + 0.47\, ln\text{ՀՄԴ}_t, \text{ (4)}$$

$ln\widehat{\text{ԱՊՄԲ}}_t$ –ն լոգարիթմված վիճակում արտաքին պետական պարտքի սոցիալական բեռի ցուցանիշն է t–րդ տարում, $\widehat{ln\Phi_t}$ –ն լոգարիթմված վիճակում փոխարժեքի մեծությունն է t–րդ տարում, $ln\text{ՀՄԴ}_t$ –ն ՀՀ միջազգային պահուստներ ցուցանիշի շարքի լոգարթիմված մեծությունն է t – րդ տարում:

Ստացված մոդելը հնարավորություն է տալիս ԱՊՄԲ ցուցանիշի վրա ունեցած ազդեցության կարևորության տեսանկյունից գործոնները դասակարգել հետևյալ կերպ՝ փոխարժեք, ՀՀ միջազգային պահուստներ, արտաքին վարկերի միջին տոկոսադրույք: Փոխարժեքի գործոնի ազդեցության բարձր մակարդակը պայմանավորված է արտաքին պարտքի արտարժութային բարձր մակարդակով, իսկ տոկոսադրույքի ազդեցության ցածր մակարդակը՝ մինչև 2009թ. ներգրավված վարկերի արտոնյալ պայմաններով: Պատկերն իհարկե մի քանի տարի անց կփոխվի՝ պայմանավորված հիմնականում առևտրային պայմաններով վարկերի ներգրավմամբ (ԶՄԸ-ն արդեն իսկ վերանայել է իր կողմից տրված վարկերի տոկոսադրույքը՝ հավելյալ 1.7%-ով):

Ատենախոսությունը եզրափակվում է եզրակացություններով, որտեղ ատենախոսն ամփոփ կերպով ներկայացրել է հետազոտության հիմնական **եզրահանգումները.**

1. ՀՀ արտաքին պետական պարտքի կայունությունը բնութագրող հիմնական ցուցանիշները, ընդհանուր առմամբ, բարելավման միտում են դրսևորել 2000-2008 թթ. ընդգրկող ժամանակահատվածում: Այդ ամբողջ ընթացքում վերջիններս հիմնականում գտնվել են կայունության թույլատրելի շրջանակներում: Ըստ ատենախոսի, սակայն, սկսած 2009թ.-ից պատկերը կտրուկ փոխվել է: Ընդ որում պարտքը բնութագրող

[15] Համակցություն, որն օգտագործվում է էկոնոմետրիկայի մեջ և ենթադրում է ռեգրեսիոն մոդելի փոփոխականների միջև առկա գծային կախվածություն, որն անհնար է դարձնում փոփոխականների միաժամանակյա դիտարկումը մոդելում:

ցուցանիշների բացասական փոփոխությունները պայմանավորված են եղել ոչ միայն պարտքի ֆիզիկական ծավալների կտրուկ աճով, այլև պարտքի ներգրավման ոչ շահավետ պայմաններով:

2. ՀՀ արտարժույթի շուկայում փոխարժեքի փոփոխության ազդեցությունը ՀՀ կառավարության 2014թ.-ի արտարժութային պարտքի վրա կազմել է 157.9 մլրդ. դրամ, որը մոտ 2,5 անգամ գերազանցել է 2014թ.-ին ծրագրված պարտքի գծով տոկոսավճարների գումարը և ավելի քան 47%-ով՝ 2014թ.-ին արտաքին աղբյուրներից ներգրավված վարկերի և փոխառությունների ընդհանուր գումարը:

3. 1999-2013թթ. ժամանակահատվածում կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ կառավարության սոցիալական նպատակներով ներգրավված արտաքին միջոցներն ակնկալվող դրական ազդեցությունը չեն ունեցել սոցիալական ոլորտին տրամադրված բյուջետային հատկացումների վրա: Կատարված հաշվարկները վկայում են, որ 1999-2013թթ. ընթացքում ՊԲ-ից սոցիալական նպատակներով հատկացված միջոցների միջինը 5%-ն է ստացվել սոցիալական ոլորտին ուղղված ծրագրերի շրջանակներում փոխառու արտաքին միջոցներից, և արտաքին դրամաշնորհներ ենթադրող սոցիալական ծրագրերը հաշվի չառնելու դեպքում կարելի է սաել, որ սոցիալական ոլորտին ուղղված միջոցառումների գերակշիռ մասը ֆինանսավորվել է ՊԲ ներքին աղբյուրների հաշվին:

4. ՀՀ կառավարության արտաքին պարտավորություններում սոցիալական ոլորտին ուղղված ծրագրերի շրջանակներում ստացած տարեկան փոխառությունների և ՊԲ-ից սոցիալական ոլորտին ուղղված ֆինանսական հատկացումների տարեկան հավելաճի տեմպերի համեմատական վերլուծության արդյունքում բացահայտվել է, որ վերջիններիս հավելաճի տեմպերը ոչ միայն չեն համընկնում, կամ ցուցաբերում որոշակի փոխկապվածություն, այլև հիմնականում ներկայացնում են անհամատեղելի պատկեր: Օրինակ, 2000թ-ին, չնայած կառավարության արտաքին պարտավորություններում սոցիալական նպատակ ունեցող փոխառությունների ծավալները աճել են մոտ 17.4%-ով, այնուհանդերձ, ընդհանուր ՊԲ-ի շրջանակներում սոցիալական ոլորտին հատկացված ֆինանսական միջոցները նվազել են: Այս ցուցանիշների միջև 2000-2013թթ. միջինացված առաձգականության ցուցանիշը կազմել է 0.47, ինչը ենթադրում է, որ կառավարության արտաքին պարտավորություններում սոցիալական ոլորտին ուղղված փոխառությունների 1% աճն ուղեկցվել է բյուջեի սոցիալական ծախսերի 0.47% ավելացմամբ: Առաձգականության նման ցածր գործակիցը վկայում է ՀՀ ՊԲ-ի սոցիալական ծախսերի աճի նվազ հակվածության մասին:

5. Անդրադառնալով արտաքին վարկային ծրագրերին, ատենախոսը նշում է, որ գրեթե բոլոր ծրագրերի կատարման ընթացքում առկա են եղել թերացումներ և բացթողումներ: Դիտարկված վարկային ծրագրերի գծով միայն 2009-2011թթ. ստուգման արդյունքներով կատարվել են ավելի քան 395 մլն. դրամի և 2.8 մլն դոլարի տարբեր տեսակի խախտումներ և անարդյունավետծախսեր:

6. 2002-2013թթ. արտաքին պետական պարտքի սպասարկման և բնակչության սոցիալական զարգացումները բնութագրող ցուցանիշների վերլուծության արդյունքները վկայում են, որ հասարակության ֆինանսական և մարդկային ներուժի առկա տեմպերով վերարտադրողականությունը բավարար չէ արտաքին պետական պարտքի սպասարկման առաջանցիկ տեմպերի պայմաններում հնարավոր սոցիալական լարվածությունից խուսափելու համար:

7. Արտաքին պետական պարտքի սպասարկման բյուջետային բեռի միջին ցուցանիշը՝ ԱՊԲ-ն ուսումնասիրված 1999-2013թթ ժամանակահատվածում միջինը կազմել է մոտ 11%: 1999-2004թթ.-ներին ցուցանիշը դրսևորել է միջինից բարձր մակարդակ, այդ ժամանակահատվածում ամենածանր ցուցանիշը գրանցվել է 2003թ.-ին՝ 26.1%, պայմանավորված ոչ արտոնյալ վարկերի սպասարկման ծավալներով, ինչպես նաև եվրոյի և ՓՀԻ-ի նկատմամբ դրամի արժեզրկմամբ: 2005-2011թթ.-ներին միջին մեծությունից շեղումներ չեն արձանագրվել: Ամենածանր ցուցանիշը գրանցվել է 2013թ.-ին՝ 34.3%, ինչն էլ պայմանավորված է եղել ՀՀ կառավարության պարտքի սպասարկման աննախադեպ աճով (2013թ.-ին ՀՀ կառավարության արտաքին պարտքի սպասարկման գումարը գերազանցել է 1999-2013թթ.-ների համար հաշվարկած միջին մեծությունը ավելի քան 7 անգամ՝ կազմելով 666 մլն.դոլար):

Ուսումնասիրության արդյունքներով ատենախոսը պարզել է, որ ՀՀ արտաքին պետական պարտքի սոցիալական բեռի վրա առավելապես ազդում են փոխարժեքի և ՀՀ միջազգային պահուստների տատանումները: Փոխարժեքի 1% աճը հանգեցնում է, այլ հավասար պայմաններում, արտաքին պարտքի սոցիալական բեռի աճին մոտավորապես 3.42%-ով: Հետևաբար, եթե հաշվի առնենք, որ 2014թ.-ի փետրվարի նկատմամբ 2015թ.- փետրվարի դրությամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ աճել է 17%-ով, ապա արտաքին պարտքի սոցիալական բեռը, այլ հավասար պայմաններում, աճել է 58.14%-ով: Ի տարբերություն փոխարժեքի, վարկի տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը դիտարկվող ժամանակաշրջանում աննշան է եղել: Պատկերը, սակայն, ըստ ատենախոսի կարող է փոխվել, պայմանավորված ՁՄԸ-ի կողմից գործող վարկերի գծով սահմանված հավելյալ 1.7% տոկոսադրույքով, ինչը ենթադրում է մոտ ապագայում արտաքին պարտքի սոցիալական բեռի էական աճ:

Առաջիկա տարիներին, պայմանավորված պարտքի ծավալի աճով և ընդհանուր պարտքի մեջ առևտրային պայմաններով ներգրավված վարկերի տեսակարար կշռի աճով, զգալիորեն կավելանան պարտքի սպասարկման գումարները, ինչն էլ էապես կանդրադառնա սոցիալական լարվածության վրա: Վերջինիցս խուսափելու համար ատենախոսի կողմից կատարվել են մի շարք առաջարկներ.

✓ վճարունակության հետ կապված հետագա խնդիրներից խուսափելու համար վերանայել ՀՀ-ի կողմից վարկային միջոցների ներգրավման գործընթացը՝ սահմանափակելով վարկերի ներգրավման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը: Մասնավորապես, այդ լիազորությամբ օժտել միայն և միայն ֆինանսների նախարարության հատուկ ստորաբաժանմանը՝ ֆինանսների նախարարի գլխավորությամբ: Ֆինանսական ներկայիս սուղ պայմաններում էլ ավելի է կարևորվում ներգրավված միջոցների արդյունավետության հարցը, իսկ արդյունավետության բարձրացման միակ ուղին դա կոնկրետ լիազոր անձանց համար նյութական և վարչական, իսկ որոշ դեպքերում նաև քրեական պատասխանատվության սահմանումն է,

✓ արտաքին պարտքի բեռի վրա արժույթների փոխարժեքների փոփոխության ազդեցությունը չեզոքացնելու համար անհրաժեշտ է նոր վարկային պայմանագրեր ստորագրելիս հաշվի առնել արտահանման կառուցվածքը և վարկերը ներգրավել այնպիսի արժույթներով, որոնք հնարավորինս համապատասխանում են արտահանման արժութային կազմին, անհրաժեշտ է արտոնություններ սահմանել հատկապես փոքր և միջին արտահանող տնտեսությունների համար և որ շատ կարևոր է անհրաժեշտ է ունենալ արտարժույթով արտահայտված միջազգային պահուստների բավարար մակարդակ,

✓ ներկայումս ՎԶՄԲ-ի, ՎԶԵԲ-ի, ԵՆԲ-ի և ԱԶԲ-ի կողմից լողացող տոկոսադրույքով վարկերի հետ կապված ռիսկերի մեղմացման նպատակով վարկառուին հնարավորություն է ընձեռնվում կիրառել հեջավորման գործիքներ, մասնավորապես փոխարկել վարկի ամբողջ գումարի կամ դրա մի մասի արժույթը մեկ այլ արժույթի հետ, ֆիքսել վարկի օգտագործված և չմարված գումարի նկատմամբ կիրառվող լողացող տոկոսադրույքը, սահմանել տոկոսադրույքի առավելագույն սահմանաչափ, մոդելավորել մայր գումարի մարման ժամանակացույցը և հետևաբար մեծ առաջընթաց կլինի օգտվել ընձեռած հնարավորությունից, իսկ հնարավորության դեպքում արտարժութային վարկերի որոշակի մասը փոխարկել ՀՀ դրամով,

✓ ամերիկյան Bank of America bank-ի կողմից յուրաքանչյուր չորս տարին մեկ աշխարհի շուրջ 80 երկրի համար ֆինանսական և տնտեսական մի շարք ցուցանիշների հիման վրա հաշվարկվում է երկրի հիմնական ռիսկը՝ երկրի միագումար ռիսկը, որը համեմատվում է ուղենշային համարվող երկրների 14

բենչմարկային խմբերի՝ ըստ յուրաքանչյուր ցուցանիշի միջին արժեքների հետ: Եվ ահա պարզվում է, որ այս հաշվարկների հիմքում ընկած 10 գործակիցներից առաջին չորսի հաշվարկման հիմքում ընկած է արտաքին պարտքը: Դրանք են՝ արտաքին պարտքի սպասարկում արտահանում, արտաքին պարտք արտահանում, արտաքին պարտք ՀՆԱ և արտաքին պարտք միջազգային պահուստներ հարաբերակցությունները: Թվարկված ցուցանիշներից առաջին երեքը հաշվարկվում և արտացոլվում են ՀՀ պետական պարտքի տարեկան հաշվետվություններում, ինչը սակայն չենք կարող ասել արտաքին պարտք միջազգային պահուստներ հարաբերակցության մասին: Վերջինս անմիջականորեն երկրի վճարունակությունը բնութագրող ցուցանիշ է և կարծում ենք, որ արտաքին պարտքի հիմնախնդրի ուսումնասիրման ընթացքում չպետք է անտեսվի և ճիշտ կլիներ պետական պարտքի ամենամյա հաշվետվություններում և պարտքի ռազմավարության մշակման ժամանակ այս ցուցանիշին ևս անդրադարձ կատարվեր:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.


1. Հովականյան Լ., Մարդկային զարգացման համաթիվը բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշների համակարգում: «Բանբեր ԵՊՏԻ», N3, 2004, էջ 137-142:
2. Հովականյան Լ., Աղքատությունը որպես համաշխարհային չարիք: «Մարդկային զարգացման և աղքատության հաղթահարման հիմնախնդիրները ՀՀ-ում» ԵՊՏԻ 19-րդ գիտական նստաշրջանի նյութեր, Երևան 2004, էջ 72-75:
3. Հովականյան Լ., Համաշխարհային տնտեսության հետճգնաժամային զարգացումները: «Բանբեր ՀՊՏՀ», N1(29), 2013, էջ 39-48:
4. Հովականյան Լ., Պետական պարտքի տեսությունները. սպասելիքներ և ռիսկեր: «Ագրոգիտություն», գիտական ամսագիր, Երևան 2013, N7-8, էջ 353-360:
5. Հովականյան Լ., Արտարժույթի շուկայի տատանումների ազդեցությունը ՀՀ կառավարության պարտքի վրա: «Այլընտրանք», 2015 #2, ապրիլ-հունիս, էջ 5-9:
6. Հովականյան Լ., ՀՀ արտաքին պետական պարտքի բեռի գնահատման ցուցանիշների համակարգը: «Այլընտրանք», 2015 #2, ապրիլ-հունիս, էջ 90-98:
7. Հովականյան Լ., ՀՀ արտաքին պետական պարտքի սոցիալական բեռի գնահատումը: ՀՊՏՀ 24-րդ գիտաժողովի (2014, հոկտեմբեր 29-31) նյութեր, Երևան, Տնտեսագետ 2015, էջ 236-240:

ОВАКАНЯН ЛИЛИТ ЮРИЕВНА

СОЦИАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ВНЕШНЕГО ГОСУДАРСТВЕННОГО ДОЛГА РА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 - “Финансы, бухгалтерский учет”.

Защита диссертации состоится 29-ого октября 2015г. В $15^{30}$ часов, на заседании Специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Налбандяна, 128.

## РЕЗЮМЕ

Одним из самых важных инструментов финансовой политики государства является государственный долг, возможности использования которого зависят от его размеров. Прогрессивный рост государственных расходов усугубляет проблему определения "безопасного" размера государственного долга с точки зрения содержания его в контролируемых пределах.

Вопрос государственного долга приобрёл особое значение в 2007-2009 гг. в контексте глобального финансового кризиса, когда некоторые страны, включая РА, для решения краткосрочных ситуативных финансовых задач привлекли большой объём обязательств.

В 2009 году, по сравнению с прошлым годом, государственный долг РА вырос более чем в два раза. Увеличение долга сопровождалось снижением макроэкономических, финансовых и социальных показателей. В связи с этим особое значение приобрели вопросы эффективности, объективности и обоснованности использования привлечённых ресурсов.

Приведенные доводы обуславливают актуальность и значимость темы диссертации.

Целью диссертации является исследование структуры и показателей внешнего долга РА в контексте глобальных долговых проблем и неуравновешенности долга в мировой экономике, на их основе, оценка

воздействия обслуживания государственного долга на социальную сферу экономики.

В результате исследования получен ряд результатов, имеющие теоретическую, практическую и методологическую значимость, в числе которых в качестве научной новизны можно выделить следующие:

- ✓ Выявлена, а также оценена зависимость между заимствованиями в рамках государственных социальных программ РА и ассигнованиями социальных расходов государственного бюджета.
- ✓ На основе оценок показателей сравнения и эластичности обслуживания внешнего государственного долга и социального обеспечения населения был раскрыт прогрессивный характер роста обслуживания внешнего государственного долга.
- ✓ Дана оценка влияния бремени внешного государственного долга на таких индикаторов, какими являются бюджетные ассигнования на социальное развитие, бедность а также индекс Джина.
- ✓ Посредством пересмотренного коэффициента оценивающего социального груза обслуживания внешнего государственного долга была оценена характеризующая связь между этим коэффициентом и валютным курсом, процентными ставками внешнего заимствования, а также международными резервами РА.

Теоретические и практические результаты данной работы могут быть полезными для исследователей и аналитиков изучаюших вопросы государственного долга, а также могут использоватсья при управление государственным долгом.

SOCIAL PROBLEMS EXTERNAL PUBLIC DEBT OF RA

The abstract of the thesis for receving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03-“ Finance, Accounthing”.

The defence of the thesis will take place on October 29, 2015 at $15^{30}$ o’clock at 014 Specialized Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics. Address: 128, M. Nalbandyan str., Yerevan 0025.

## ABSTRACT

Government debt is the most important tool of macroeconomic and financial policies which is used depending on the size of the debt.Fast growth of Government expenses makes it more actual to determine the ‘safe’ size of public debt, which is important for management purposes.

The problem of government debt got special importance in 2007-2009 in the context of the global financial crisis, when some countries, including the RA, involved large amount of liabilities for solving short-term financial goals.

In 2009, compared to the previous year foreign debt rose by more than twice. The surplus of the debt amount was accompanied by a decline in macroeconomic, financial and social indicators.

In this period the efficient and objective use of resources, as well as justification issues became of more importance. Especially when it concerns to servicing the foreign debt and the social tensions problems, new questions arise which should be solved or at least withdrawn, otherwise destabilization is inevitable.

The mentioned issues make the subject urgent and actual.

The aim of this dissertation is the analyze of the indicators and structure of external debt of RA in the context of global economy and unbalanced debt issues, as well as assessment of the impact of servicing external debt on the social sphere of economy.

A number of conclusions of theoretical, practical and methodical direction have been received as a result of the study. The following can be outlined among them as a scientific innovation.

- ✓ Identified and evaluated addiction between annual lending provided to the RA government social sector programs and State budget annual social allocations.
- ✓ Based on the valuation of comparison and elasticity of the external government debt service and populations social welfare rating, external government debt services progressive increase nature was revealed.
- ✓ Evaluated the impact of the external debt burden of stress indicators such as budget allocations for social development, poverty and the Gini coefficient.
- ✓ By coefficient of the revised rates of the external government debt services social burden the connection between that coefficient and currency exchange rates, interest rates of foreign borrowings was evaluated.

The solutions submitted in the article can be used in the work aimed at increasing the efficiency of government debt management. And the theoretical and practical results can be useful for researchers involved in the analysis of government debt.